

Ծիծեռնավանքի եկեղեցու յատակագիծը ըստ շինարարական փուլերի (գծագրի հիմքը Ց. Սանամեանի)

ԴԱԴԻ ՎԱՆՔ
(ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Պ. Ա. Չոբանեան

Դադի վանքը իր հնութեամբ Այսրկովկասի եւ, մասնաւորապէս՝ Հայաստանի, հնագոյն քրիստոնէական սրբավայրերից է: Սակաւ են այն սրբատեղիները, որոնց հիմնադրումը աւանդաբար կապւում է անմիջականօրէն առաքեալների կամ նրանց աշակերտների գործունէութեան հետ: Ըստ այդմ, ուշադրաւ է այն աւանդութիւնը, որ պահպանուել է Դադի վանքի հիմնադրութեան մասին: Վանական վարդապետի «Այլ բան ասացեալ Վանական վարդապետին» թղթում, որ հաւանաբար առնուած է Միքայէլ Ասորու «Ժամանակագրութիւնից», ասւում է.

«Դադիում յեւթանասնիցն, որ գնաց հրամանաւ Թադէոսի ի Մեծն Հայք եւ ի կողմանս հիւսիսոյ, եւ լուեալ զմահն Աբգարու եւ դարձեալ եմուտ ի Փոքր Սիւնիս եւ, կրաւնաւորեալ անդէն ծածկաբար, վախճանեցաւ, եւ տեղին շինեցաւ վանք եւ յանուն նորա կոչեցաւ Դադիու...»[1]: Այսպիսով, Դադի վանք է կոչւում Թադեւոս առաքեալի աշակերտներից մէկի՝ Դադի, անունից ու նաեւ Խութայ վանք՝ խութի (բլրի) վրայ կառուցուած լինելու կամ մերձակայ Խուդ (Խութայ) գիւղի անունից, որը վանքին են նուիրել «Ես Գոնցէս ու որդիքս՝ Հասան ու Վարհամ, թոռն Դաւփեանց, տվաք ի Դադի վանս զմեր հայրենիքն զԽուդ՝ իւր սահմանովն...»[2]: Հայր Ղեւոնդ Ալիշանի թուագրմամբ «Ժամանակ շինութեան վանացս հարկ է, թէ յառաջնումն դարու իցէ, զի Գոշն Առաքելադիր կոչէ ուխտ զսա»[3]:

Սեդրակ Բարխուդարեանի թուագրմամբ, վանքը պէտք է հիմնարկուած լինի 4-5-րդ դարերում[4]:

Առայժմ մեր ունեցած վաղագոյն յիշատակութիւնը Դադի վանքի մասին այն տեղեկութիւնն է, որ պահպանուել է Մովսէս Կաղանկատուացու մօտ եւ որը վերաբերում է 9-րդ դարի առաջին կէսի իրադարձութիւններին. «Զայս Վարազ Տրդատ եւ զորդի իւր Ստեփաննոս Ներսեհ ի Փիլիպեան՝ ազգակիցն իւրեանց սպան ի միում ժամու ի խորաձորն, որ կոչի Դադոյի վանք»[5]:

12-րդ դարի կէսերին, երբ Գանձակում քաղաքագլուխ կարգուած Խուհտուղտին ապստամբեց սուլթան Մասուդի դէմ, ապա Պարսկաստանից ապստամբութիւնը ճնշելու համար ժամանած Զոլի զօրապետը ապստամբների հետ հաշուեյարդար տեսնելուց յետոյ արշաւեց նաեւ Արցախ եւ, ըստ Մխիթար Գոշի վկայութեան, 1145 թ. «էառ զամենայն ամրոցս նոցա, քակեաց եկեղեցիսն եւ այրեաց զվանորեայսն, կոտորեաց զազատսն եւ գերեաց զզօրականսն...»[6]:

Յաջորդ տարին եւս վերադառնալով Այսրկովկաս, Զոլի ամիրան կրկին արշաւում է «ի կողմն Խաչինոյ, Տանձեաց եւ Ադախայ, քանզի յառաջնում նուագին ոչ մնացին ընդ ձեռամբ նորա դղեակք այնոքիկ, զորս էառն, այլ սակաւ ինչ, մնացեալքն յազատացն անտի, որք էին զողեալք յանտառս մայրեաց, առին դարձեալ զբերդ-ամրոցսն իւրեանց եւ դարձեալ ապստամբութեամբ վարէին ընդ տաճկացն»[7]:

© National Library of Armenia

Զոլի ամիրապետը փորձում է վրէժխնդիր լինել, սակայն չի կարողանում գրաւել ամրոցները եւ բաւարարւում է աւերելով գաւառներն ու հրկիզելով «զառաքելադիր ուխտ սրբութեանն, որ կոչի Դադուի վանք», ապա հեռանում է եւ գնում «յաշխարհն Մարաց»:

1182 թ. Վախտանգի որդի Հասանը, որ տերն էր «Հաթերո եւ Հանդաբերդո, Խաչինաբերդո եւ Հաւախաղացին», Դադի վանքում խաչքարի վրայ թողած արձանագրութեան մէջ հաղորդում է, թէ «կացի յաւագութեան ամս խ (40) շատ պատերազմաւ եւ յաղթեցի թշնամեաց իմոց աւգնութեամբն աստուծոյ, եւ եղեն ինձ Զ (6) որդի, զբերդերս եւ զգաւառս ետու նոցա եւ եկի ի վանքս՝ մաւտ յիմ եղբայրս՝ ի տէր Գրիգորէս եւ եղէ կրաւնաւոր... ՈԼԱ (1182) թուիս»[8]: Ուշագրաւ է, որ նրա հետ վանք է գնացել նաեւ կինը՝ Մամա-խաթունը («դուստր Կուրիկայ թագաւորին»[9]), ինչը նշանակում է թէ վանքը այն ժամանակ պէտք է ունենար նաեւ կուսանոց:

12-13-րդ դարերում Դադիվանքը մէկն էր ժամանակի հայկական նշանաւոր հոգեւոր եւ մշակութային կենտրոններից, որի համար եւս Վախթանկ Հաթերքեցու կինը՝ Արզու խաթունը, ինչպէս Մխիթար Գոշի հիմնադրած Նոր Գետիկ եկեղեցու համար էր «բազում ինչ օժանդակ եղեւ, արար եւ վարագոյր գեղեցիկ՝ դստերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղագունաց՝ ներկեալ պէսպէս եւ զանազան, գործ քանդակակերպ եւ նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք՝ տնօրինականօք փրկչին եւ այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն: Եւ որք տեսանէին, օրհնութիւն տային աստուծոյ, որ ետ կանանց իմաստութիւն ոստայնանկութեան եւ հանճար նկարակերտութեան...»[10]:

Դաւիթ Մոլորեցուցչի դէմ ձեռնարկած միջոցառմանը մասնակցելու եւ նրա տարածած աղանդաւորական շարժումը արմատախիլ անելու համար, ըստ Կիրակոս Գանձակեցու, «եկն եւ Դադի վանից եպիսկոպոսն տէր Գրիգորէս, եւ վարդապետն Վարդան, զոր Ցօժար որդին կոչէին, բազում քահանայիւք ի գիւղն յայն, քանզի ի նոցա վիճակին էր, խաչիւք եւ աւետարանօք. եւ արարեալ գիշերապաշտօն, կանգնեցուցին զայրն խաբեալ ի միջին, զի թերեւս ելցէ ի նմանէ ոգին պիղծ:... Ապա ձեռն արկեալ եպիսկոպոսին եւ երիցանցն, կամէին կործանել զխաչն, զոր կանգնեաց մոլարն: Յարեաւ ամենայն ամբոխ բազմութեանն սրովք եւ բրովք, կամէին սպանանել զնոսա: Եւ նոցա արտաքս ելեալ յամբոխէն անիծէցին սաստիւք նզովիւք զյանդգնեալսն: Ապա ոմանք ի նոցանէ զղջացեալք, չոգան աղաչեցին զեպիսկոպոսն եւ զերիցունսն արձակել զնոսա ի կապանաց անիծիցն, եւ զայրն ետուն ի ձեռս նոցա»[11]:

1402 թ. արտագրուած Գրիգոր Տաթեւացու «Մեկնութիւն աւետարանին Մատթեոսի» երկի գրիչ Թումա Սիւնեցին իր թողած յիշատակարանում գրում է. «Եւ կատարեցաւ սայ ի Թուականութեանս Հայկազեան տաւմարի ութհարիւրերորդի յիսներորդի առաջներորդի ամի, ի հայրապետութեանն Հայոց եւ Աղուանից երկոցունց տէրանց Կարապէտք կոչեցելոց, զոր այսպէս պատահեցան ի մերումս ժամանակի՝ անուանակիցք գոլ միմեանց եւ յարհեպիսկոպոսութեան այսմ նահանգիս տէր Զաքարիայի՝ Դադի վանուց վերատեսչի. ի հռչակաւոր երկիրս Ծար, ի գեւղս Քարավաճառ, ընդ հովանեաւ սրբոցս, որ ի սմա...»[12]:

16-րդ դարում եւս շարունակւում էին վանքի եւ միաբանութեան շինացմանն ուղղուած ձեռնարկումներ, կատարւում նուիրատուութիւններ, կանգնեցւում խաչքարեր ու փորագրւում նուիրատուական արձանագրութիւններ[13]:

16-րդ դարում չնայած տարածաշրջանում տիրող քաղաքական անկայուն վիճակին Ծար գաւառում, եւ մասնաւորապէս Դադի վանքում շարունակւում էր մշակութային կեանքը, ստեղծւում էին մատենագրական երկեր: Յովհաննիսիկ Ծարեցու կազմած ժամանակագրութեան մէջ մեծ յարգանքով է խօսւում մէկ այլ նշանաւոր Ծարեցու մասին. «Ի սոյն թուականի (1583) եղեւ վախճանք մեծ եւ երանաշնորհ վարդապետին մերոյ Յոհաննիսի: Եւ զի էր նա ի յերկրէն Ծարայ, Փոքր Սիւնիս կոչեցելոյ, ի վանից Դադիու սուրբ Յառաքելոյն, որդի յումեմն ազատի եւ բարեբարոյի Զհանշահ կոչեցելոյ, յազգէ Դօփեայ եւ Հասանայ: Եւ էր նայ յաշակերտ մեծ վարդապետին Ղուկասու Հախպատեցոյ, յոյժ սրբասէր եւ աստուածասէր, ... յոյժ ընթերցասէր եւ գրասէր, մինչ զի բազում գրեանս ետ գրել յիւրն յիշատակ եւ այլ սպասք եւ զարդ եկեղեցոյ յոլով: Եւ յալեւորեալ լի յաւուրքք հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս ի յունվար ամսոյ Ի (20) ի ՌԼԲ (1583) թուականիս մերոյ, որոյ պատուական մարմինն նորա եղեալ կայ ի յերկիրն Գեղամայ ի գեւղն Վասակաշէն, հուպ տամպարանի վարդապետն Սարգսի»[14]:

Ծար գաւառի վանքերում ու մենաստաններում աշխուժութիւն էր տիրում նաեւ 17-րդ դարում եւ յատկապէս դարի երկրորդ կէսին՝ Միրզախան բեկի մելիքութեան եւ Պետրոս Խանձքեցու[15] կաթողիկոսութեան տարիներին: Այնտեղ շարունակում էին արտագրուել ձեռագրեր, որոնց մի մասը մեզ է հասել տարբեր հաւաքածուների մէջ: Այսպէս, մեզ հասած աւետարաններից մէկը ունի հետեւեալ յիշատակարանը. «Ի թվին ՌՃԲ (1653) ստացաւ զսուրբ աւետարանս հեզահոգի Թադեւոս էրէցն ի հալալ ընչից իւրոց, բարի յիշատակ հոգւոյ իրոյ եւ ծնողացն, որ էր նա բնական ի յերկրէն Մաղաւզայ, ի գեղջէն Բախիշոյ, որ եւ ազգմամբ չարին փախստեա եղեալ, եկեալ բնակեցաւ ի յերկիրս Ծարա(յ), ի գեօղն Մոս: Եւ առաջնորդութեան ի յայսմ նահանկի զտէր Ստեփաննոս արհիեպիսկոպոսն եւ ժրաճան հովիւն: Եւ էր սպասաւոր ի Սբ. Դադի վանիցն եւ Մարդաղոնեաց Ս. Նշանին: Եւ զի էր երաշխաւոր եւ հոգացող ի տէր Թադէոսին՝ հոգեւոր, այլ եւ մարմնաւոր: Աստուած զինքն անփորձ եւ անսասան կենօք պահեսցէ ի յաթոռի իւրում մինչեւ ի խորին ծերութիւնն»[16]:

Վերոյիշեալ Ստեփաննոսի առաջնորդութեան տարիներին (1647 թ.) Դադի վանքում ոմն Մովսէս երեց վերանորոգել է 1490 թ. մի Աւետարան եւ թողել հափշտակեալ յիշատակարան:

Այլ ձեռագրով շարունակուած է Աւետարանի յիշատակարանը եւ նշուած, թէ՝ «Եւ արդ յիշեցէք զսրբամիտ Եղկարն, որ էր նա ի յերկրէս Ծարայ, ի գեղջէն Հոսաբակայ եւ ջերմեռանդ սիրով ետ գրել զյայսմաւուրքն... Եւ թողեալ զտուն իւր եւ զամենայն ինչ, եւ ելեալ գնաց յանապատ Եւ յետ տարւոյ միոյ եւ երկու եկեալ ի մայրաքաղաքս Սոթ, վասն նորոգելոյ զաւետարանս եւ ետ նորոգել յոյժ փափագանօք...»[17]

Վերոյիշեալ աւետարանի նորոգող Մովսէսը 1652 թ. արտագրել, ծաղկել ու կազմել է մի շարակնոց, որի յիշատակարանում եւ գրել է. «...Եւ ես թաբօրս ի բարեաց գործոց եկեալ հասա ի յերկիրն Ծարայ, ի գեօղն որ կոչի Ապահէն: Եւ էր ի ժամանակս Պարսից նորընձա Փոքր շահ

© National Library of Armenia

Ապասին, եւ ի հայրապետութեանն Էջմիածնեա(յ) հեզահոգի տէր Փիլիպպոսի բազմահանճար եւ սրբազան կաթուղիկոսի, եւ ի յԱղվանից հայրապետութիւն Գրիգորի քաջ եւ արի կաթուղիկոսի, եւ յառաջնորդութեանն ի յայսմ ուխտի ի տէր Ստեփաննոս արհիեպիսկոպոսի, որ է սպասաւոր եւ ծրաճան հովիւ ի Սբ. Դադի վանիցն եւ Մարդաղաւնեաց Ս. Նշանին. *Աստուած իւրեանն արքայութիւն տացէ եւ ընդ սբ. հայրապետացն դասեսցէ, որ սա ձեռնադրեաց (անա)րժանս. ... ի թուականութեանս հայոց ՌՃԱ (1652) գրեցաւ, ծաղկեցաւ եւ կազմեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ...»* (շարունակութիւնը ընկած է)[18]:

1684 թ. Կուսանաց վանքի միանձնուհի Վարվառէ կոյսի կողմից արտագրուած Աւետարանի յիշատակարանում արժէքաւոր վկայութիւններ կան երկրամասի քաղաքական պատմութեան վերաբերյալ: Ձեռագրի պատուիրատու քահանայապետ տէր Պետրոս վարդապետը զաւակն էր պարոն Մելիքպեկի եւ հարազատ եղբայրը՝ Մելիք Միրզախանի: Պարոն Մելիքպեկը որդին էր Մելիք Պալասանի, իսկ վերջինիս եղբայրն էր Ստեփաննոս արհիեպիսկոպոսը: Մելիք Միրզախանի միւս եղբայրները, կրում էին բեկի տիտղոսներ՝ Մանուչար բեկ, Աթաբեկ, Ղարաբեկ եւ Հասան բեկ: Մելիք Միրզախանի աւագ եղբայր Աղաբեկը ձեռագրի գրութեան ժամանակ արդէն հանգուցեալ էր, իսկ ձեռագիրը գրուել է «ի երկիրս Մար՝ Փոքր Սիւնիս կոչեցելոյ, ի սուրբ վանս Կուսանաց, ընդ հովանեաւ Դադէի սուրբ Առաքելոյն եւ սուրբ Կաթուղիկէին եւ սուրբ Աստուածածնին եւ զամենազօր սուրբ Նշանին Մարդաղաւնեաց ...»[19]:

1694 թ. գրուած յիշատակարանում, որ պահպանուել է աւետարանի վերջում, ուշագրաւ վկայութիւններ են արձանագրուել երկրամասի պատմութեան համար.

« ...Արդ, ի ժամանակի, յորում գնեցաք զկենսաբուխ սուրբ աւետարանս, էին կաթողիկոսք ի տանս Աղուանից՝ երջանկափառ հայրապետքն՝ զտէր Երեմիայն եւ զտէր Սիմէօնն. զսուրբ Աթոռոյն Գանձասարայ եւ զմերումս նահանգի առաջնորդութեան զԴադի վանից եւ զխատի վանից՝ արհի եւ պանծալի բաբունապետքն՝ զտէր Պետրոսն եւ զտէր Յոհաննէս, զտէր Բարսեղն եւ զտէր Գրիգորն եւ զտէր Աթանասն եւ զտէր Ղազարն եւ զտէր Ստեփաննոսն, եւ իշխանքն մեր՝ մեծափառ, աղօթասէր մէլիք Միրզախան: Աստուած զինքն հաստատուն պահեսցէ հանդերձ թագաւորութեամբն եւ պարոն յորդեկօքն, ամէն: Գրեցաւ ՌՃԽԳ (1694) թուին, յունիսն ԺԹ (19) յամսեան, ի ժամանակի, յորում նորոգէաք զսուրբ Աթոռս Խատէի աստուածափառ սուրբ ուխտս. ի դառն ամանակի, յորում նեղիմք ի բռնաւորաց վասն մեղաց մերոց, յիշել աղաչեմք ի բարեսիրացդ. բաւ է»[20]:

18-րդ դարի երկրորդ կէսին, ինչպէս ողջ Մար գաւառը, որ ենթարկւում էր Երեւանի խանին, այնպէս էլ Խութավանքը (Դադի վանք) մտնում էր Էջմիածնի տիրոյթների մէջ: Սիմէոն Երեւանցի կաթողիկոսը իր «Ջամբռ» աշխատութեան մէջ, որտեղ թուարկուած են Էջմիածնի վանքի տիրոյթները, հատուկ թուարկում է այն բոլոր գիւղերն ու կալուածները, որոնք գտնուում էին Մարում ու Սոդքում՝ Արեգունիի հարեւանութեամբ եւ, որպէս Խութավանքի կալուածներ, պատկանում էին Էջմիածնին (ընդհուպ մինչեւ Զափար գիւղն ու Խնթրավանքը): Սիմէոն Երեւանցու հաղորդումը, որպէս առաւել իրազեկ ու հաւաստի սկզբնաղբիւրի եւ որ վերնագրուած է «Խութավանից որպիսութիւնքն»[170], *բերում ենք ամբողջութեամբ. «Վանքս այս... նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ ... Ունի վիճակս զբոլոր երկիրն Քեալա-*

նու, որոյ հայերէն անունն Մարայ երկիր կոչի, որ է սահմանակից Խամսայու, բայց Էջմիածնի է վիճակեալ, եւ ընդ ձեռամբ Երեւանու իշխողին: Որոյ գեօղօրայքն են այսոքիկ. *Էրք, Մնիլանց, Կարմիրշէն, Սալամալիք, Քաւթառանց, Ուռուցփոր, Ատարէնիս, Մուղրուղաշէն, Հոսաբակ, Կաւալու, սոքա յայսկոյս լերինն են, կից Արեգունւոյն Գեղամայն: Իսկ յայնկոյս լերինն, Մեծ Մար, Կաժ, Անուխս, Խօլօզանց, Դաշտակ, Հաճար, Ապահէն, Ճումէն, Քարատակ, Զուար, Մոս, Սեւաջուր, Մովատեղ, Խրանց, Հալուճ, Մութանց, երկու Դաւաչխուր, Մեծ եւ Փոքր Լեւ, Եանշաղ, Բարսեղի շէն, Մէյտանն, Երիցիշէն, Խաթավանք, Զափար, Կեարաք, Նորշէն, Խնթրավանք: Ունի եւ զանապատս ընդ ձեռամբ իւրով, զԽնդրավանից անապատն, եւ զՄարայ անապատն»*[21]:

18-րդ դարի վերջերին է վերաբերում այն տեղեկութիւնը, ըստ որի Խոթ գիւղի 300 բնակիչներ տեղափոխուել են Երեւանի խանութիւն եւ հիմնադրել Ենիջա գիւղը, որոնց մի մասն այնուհետեւ տեղափոխուել է Շուլավերի կողմերը[22]:

1813 թ. Գիւլիստանի հաշտութեան պայմանագրի կնքումից յետոյ ռուսական իշխանութիւնների հովանաւորութիւնը վայելող Մեհտի Կուլի խանը, որ Իբրահիմ խանի սպանութիւնից յետոյ ստացել էր Ղարաբաղի խանի պաշտօնը, սկսեց եռանդուն ջանքեր գործադրել ամայացած հայկական գիւղերի ու վանքերի կալուածների ու հողատարածքների իւրացման ուղղութեամբ: Խանը եւ նրա ընտանիքի անդամները, օգտուելով ռուսական պաշտօնեաների կողմից տեղական իրադրութեան անիրազեկութիւնից, տարբեր պատրուակներով ու փաստարկումներով սեփականեցին նաեւ այդ ժամանակ արդէն Քարավաճառ (Քեալբաջար) կոչուող գաւառի հողատարածքները, այդ թւում նաեւ Դադի վանքի ու միւս հայկական հինաւուրց վանքերի կալուածքները:

1828 թ. Երեւանի ու Նախիջեւանի խանութիւնների Ռուսաստանին միացումից եւ ապա 1830-1840-ական թուականներին Այսրկովկասում ռուսական իշխանութեան ամրապնդումից յետոյ, Արցախի հոգեւոր առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալեանը ձեռնամուխ եղաւ հայկական վանքերի, եւ մասնաւորապէս նաեւ Խութավանքի, կալվածատիրական խախտուած իրաւունքների վերականգնման ծանր գործին՝ տարբեր անհերքելի վաւերագրերով դատարաններում ապացուցելով վանքերի կալուածատիրական իրաւասութիւնները: Այդ ուղղութեամբ իր կատարած աշխատանքների մասին նա գրել է իր կտակի մէջ (10-րդ կէտ), որում ասուած է. «Զանազան աշխատակրութեամբ եւ տառապանօք հանելով ի ձեռաց ժառանգաց Ախմետ խանին եւ Մեհտի-Ղուլի խանին եւ զանազան մասնաւոր անձանց յանուն Խոթայ վանից, այնինքն է վանքն Դաթէի զգաւառական Դաւթիսու, Քարվաճառ, Մար, Լեւայ-ձոր, որ եւ Թարթարի ձոր, ուրանոր են այժմ աւելի քան քառասուն եւ երկու շէն եւ ամայի գիւղօրայք եւ գիւղատեղիք եւ ամարանոցք վրանաբնակ թուրք ժողովրդեան, թողեալ եմ յաւիտենական յիշատակ հոգւոյն իմոյ եւ նախնեացս յօգուտ եկեղեցական իշխանութեան հանդերձ ամենայն վարելահողվքն եւ անտառօք: Թիւ հաստատուն բնակչաց տեղացն այնոցիկ առ այժմ հասանէ ցերեք հարիւր գերդաստան: Ի միասին այնոցիկ կալուածոց գոն ի դիւանատան իմում եւ ի վիճակային կանսիստորիին Ղարաբաղու եւ յայլ տեղիս գործք եւ գրագրութիւնք եւ ցուցակք: Եթէ կամօքն աստուծոյ ապատ լիցին տեղիքն այնոքիկ ժա-

© National Library of Armenia

մանակաւ, այնոքիկ կալուածք Խոթայ վանից կարեն բաւականանալ աւելի քան երկու հազար տուն բնակչաց»[23]:

Բաղդասար միտրապոլիտի կատարած աշխատանքի մասին աւելի լիակատար տեղեկութիւններ է հաղորդում նրա կրտսեր ժամանակակից Գրիգոր Տէր-Յովհաննիսեանը (Մուրացան) Բաղդասար միտրոպոլիտի կենսագրութեան մասին գրած իր յօդուածում. «Նախ եւ առաջ ի գործ դրաւ նա իւր բոլոր ջանքերը Խոթավանքի մեծամեծ եւ ընդարձակ կալվածներն ու հափշտակուած սեփականութիւնները ազատելու Մեհտի Գուլի խանի դստեր եւ ուրիշ պարսիկ բեգերի ձեռքից: ...Այս կալուածները ընդհանուր անուամբ բոլորը միասին կոչւում են Դուլթխու-Քեալբաջար եւ տարածւում են մինչեւ 140 000 դեսեատինի չափ, ձգուած Թառթառ գետի հիւսիսային եւ հարաւային ափերի երկարութեամբ: Բացի բազմաթիւ ընդարձակ վարելահողերն, մեծամեծ անտառներն եւ մանր ու աննշան բնակութիւններն, Դուլթխու-Քեալբաջառի մէջ գտնւում են հետեւեալ գիւղերը. Մար, որ էր նախնի հայ իշխանաց բնակարան, Զախմախ, Զագլիկ, Ղարախաչ, Գեեալինուչան, Գիւրիդաշ, Մարալուչան, Բաղրբէյ, Ղլըշլու-Փարախկանլու, Հասանալու, Ալխասլու, Լեւ (որ է ընդարձակ տարածութիւն մեծամեծ երկիրների, որոց մէջ գտնւում են թուով 12 գիւղեր), Բաղլուփաեայ, Զարաքդար, Քեշիշքէնդ, Քիլիսաերի (որ է ամարանոց թափառականաց), Բալլուբել, Սէյիտտար, Երկրորդ Ղլըշլու, Ղօթուռռու, Ղօշունալիլար, Ղօշտաջ, Աղիսթաղ, Վարդանագոմք, Քիւպբուլնդ, Սուղայեան, Ղամիշլու, Այրում, Զիլգիղարլու, Խանանլու, Ղարաջանլու, Բազիրգեան-բուլաղ եւ այլն:

Դուդխու-Քեալբաջարի եւ նրա սահմանակից զանազան լեռների վերայ եւ հովիտների մէջ գտնւում են նոյնպէս շատ վրանաբնակ թափառական ցեղեր, որոնք դարձեալ Խուրթայ վանքի հպատակ են համարւում, որպիսիք են քեանգեառլուեցիք, Վաղահացիք, Ղինլուներ, Ղարադաղլուներ, Ամիրալիլար, Ղարաղօյինլար, Գիւլկեազլու, Սհաթլու, Ղարվանդ, Շխավանդ, Սըրխ-ավանդ, եւ Բաֆրավանդ քէօհլանիք, Աթէմազլու, Ֆիրհասանլու, եւ ուրիշ շատ պարսիկ ազգաբնակութիւններ» («Փորձ», 1880, 5, էջ 159-160):

19-րդ դարի երկրորդ կէսին, սակայն, Բաղդասար միտրապոլիտի մահից յետոյ «վիճակային առաջնորդների անհոգութիւնից եւ տեղական հոգեւոր կառավարութեան թուլութիւնից այդ կալուածներից շատերը հետզհետէ անցան եւ անցնում են Մեհտի-Ղուլի խանի Խուրշիդ դստեր, Դաւութ-աղա Աղալարովի եւ ուրիշ բէգերի ձեռք: 1851 թուականից սկսած մինչեւ 1873 թ. վանքը այս կալուածներից ստացել է տարեկան աւելի քան 1500 ռուբլի արդիւնք..., իսկ 1874 թուից սկսած մինչեւ այժմ (իմա՛ 1880 թ. - Պ. Զ.) ստանում է 600 ռուբլի միայն, որովհետեւ կալուածների մեծ մասը այժմ վէճի մէջ է եւ արդիւնքը ստանում են ուրիշները: Եթէ այդ կալուածական վէճերը, որոնք դեռեւս շարունակւում են Գանձակի նահանգական դատարանում կամ Տփխիսի դատաստանական պալատում, յօգուտ վանքին վախճան ստանան եւ կալուածները արժանապէս հոգացուին, այնուհետեւ Խուրթայ վանքի այդ սեպհականութիւնից հաշուով տարեկան կը ստացուի աւելի քան 10000 ռուբլի, մի գումար, որ Շուշւոյ հոգեւոր դպրոցի վիճակը ընդ միշտ կապահովացնէ» (նոյն տեղում, էջ 160, ծնթ. 1):

Դադի վանքի կալուածներից ստացուող եկամուտը թէեւ այլեւս չէր նախա-

տեսւում իր իսկ վանքի վերանորոգման համար, սակայն կիսալքուած վիճակում էլ այն մնում էր որպէս մի փառահեղ յուշարձան, որը մեծ տպաւորութիւն էր գործում այցելուների վրայ: Մակար Բարխուտարեանցի վկայութեամբ.Վանքիս վանահայրն է այժմ տաթեւացի ոմն քահանայ, որ մեր եկած ժամանակ նա գնացած էր իւր հայրենիք: Ափսո՛ս, որ քայքայւում եւ աւերւում են պատուական վանքերս, խլուեցան, ինչպէս տեսանք զանազան ժամանակներում, զանազան իշխաններից վանքերիս նուիրած ահագին կալուածներն, անտառներն եւ հողերն:

Վիմափոր քարայր

Դատի կամ Խոթայ վանքից վար Թարթառի ձախ կողմում կայ մի վիմափոր քարայր, որի մուտքն գետնի երեսից է: Լուսահոգի Բաղդասար մետրապոլտի կենդանութեան ժամանակ Քեօլանի մահմետական ոմն որսորդ կրակում է մի քօշ, որ անյայտանում թաւալգլոր: Հասնում է ետեւից որսորդն եւ տեսնում, որ քօշն ընկած միջոցին ջարդուած են այրի բերանի փտած փայտերն, այրի մէջ ընկած է որսն, ուր եւ դարսուած են շատ գրքեր: Որսորդն վեր է առնում գրքերից մին, աճապարում Շուշի, յայտնում Բաղդասար մետրապոլտին, որ պարգեւատրում է որսորդը եւ Շուշի փոխադրել տալիս ձեռագրերը: Գրչագիրներումս եղած է մի ձեռագիր ընտիր մաշտոց՝ գրուած սուրբ Մեսրոպի աշակերտ Ստեփաննոս վարդապետի ձեռնով, որ այժմ գտնւում է Ս. Էջմիածնի հնադարանում[24]:

19-րդ դարի երկրորդ կէսին Դադիվանքը դառնում է նաեւ այցելու գիտնականների ու ճանապարհորդների ուշադրութեան առարկան: Դադիվանքի նկարագրութեանն ու նրա արձանագրութիւնների հաւաքմանը եւ հրապարակմանը հանդիպում ենք Յովհ. Շահխաթունեանցի[25], Սարգիս Ջալալեանցի[26], Մակար Բարխուտարեանցի[27], Աբիխի[28], Խաչիկ Դադեանի, Յ. Օրբելու[29], Մեսրոպ Տէր-Մովսիսեանի[30] եւ այլոց աշխատութիւններում՝ յուշարձանի մասին ջերմ ու հիացական տպաւորութիւնների արձանագրումներով[31]:

Հայր Ղեւոնդ Ալիշանը իր «Արցախ» աշխատութեան մէջ առաջինն է ձեռնամուխ եղել կազմելու վանքի առաջնորդների ցանկը.

«Տէր Գրիգորիս, որդի Ա. Վախտանգայ, 1181

Տէր Յովհաննէս, 1265

Տէր Անաստաս, 1265

Տէր Սարգիս, որդի Գ. Հասանայ, 1267

Տէր Վարդան ի ԺԵ դարու

Տէր Աւագ ի կէս ԺԵ (դարու)

Տէր Գրիգոր ի 1558»[32]:

Այդ ցանկը նոր անուններով համալրուեց Ս. Կարապետեանի կողմից, որով առաջնորդների քանակը հասաւ 9-ի[33]:

Ըստ արդէն իսկ յայտնի սկզբնաղբիւրների[34] եղել են հետեւեալ առաջնորդները.

1. Տէր Գրիգոր (որդի Վախթանգայ, եղբայր Հասանայ) - 1182, 1190 թ.[35]
2. Տէր Գրիգորիս (որդի Վասակայ)-1224, 1233, 1241, 1253 թթ.[36]
3. Տէր Աթանաս (որդի Հասանայ)- 1261, 1263, 1265, 1271, 1283, 1291 թթ.[37]
4. Տէր Յովհաննէս «եղբայր Հասանայ)- 1305 թ.[38]
5. Տէր Սարգիս «որդի Հասանայ եւ Մամքանայ)-1309, 1312, 1340 թթ.[39]:
6. Տէր Զաքարիա - 1402 թ., 1411 թ.[40]

© National Library of Armenia

7. Տէր Վարդան - ԺԵ դար (ըստ Ղ. Ալիշանի):

8. Տէր Աւագ - ԺԵ դար [41]

9. Տէր Գրիգորիս - 1556, 1558 թ.

10. Տէր Յովհաննէս - 1583 թ.[42]

11. Տէր Ստեփաննոս - 1647, 1652, 1653 թ.[43]

12. Տէր Պետրոս - ԺԷ դար (1684 թ.)[44]

13. Տէր Պետրոս - ԺԸ դար (1721 թ.)[45]

Համազասպ Ոսկեանը իր «Արցախի վանքերը» աշխատութեան մէջ նկատի ունենալով եղած վիմագիր ու պատմողական աղբիւրների համամասնութիւնը, Դադի վանքի մասին գրում է. «Սոյն վանքի մասին որքան շատ են քարի վրայ եղած յիշատակութիւնները, այնքան կարծես սակաւ են թղթի վրայ եղած տեղեկութիւնները»[46]

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 536: Հմմտ. **Միքայէլ Ասորի**, *Ժամանակագրութիւն*, Երուսաղէմ, 1871, յաւելուած, էջ 33:

2 Դիւան հայ վիմագրութեան, պրակ 5, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, 1982, էջ 197, հմմտ. էջ 203:

3 **Ղեւոնդ Ալիշան**, *Արցախ*, -«Բազմավէպ», 1988, 1-4, էջ 261 (Նոյնը՝ Երեւան, 1993)

4 Դիւան հայ վիմագրութեան, պրակ 5, Արցախ,, կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, 1982, էջ 197:

5 **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Ադուանից աշխարհի*, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Վարագ Առաքելեանի, Երեւան, 1983, էջ 340:

6 **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Ադուանից աշխարհի*, Երեւան, 1983, էջ 353 (յաւելուած Բ): **Ղ. Ալիշան**, *Հայապատում*, Վենետիկ, 1901, էջ 386:

7 Նոյն տեղում:

8 «Դիւան հայ վիմագրութեան», պրակ 5, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, 1982, էջ 198: **Մակար Բարխուտարեանց**, *Արցախ*, Բագու, 1895, էջ 203:

9 «Դիւան հայ վիմագրութեան», պրակ 5, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, 1982, էջ 215:

10 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն հայոց*, Աշխատասիրութեամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 215-216:

11 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն հայոց*, էջ 327:

12 «*ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*», մասն Ա, Երեւան, 1955, էջ 24:

13 «*Դիւան հայ վիմագրութեան*», 5, էջ 215:

14 «*Մանր ժամանակագրութիւններ*», հ.2, Երեւան, 1956, էջ 244-245: Բնագրի հատարակիչ Վ. Յակոբեանի ծանօթագրումը, որին հետեւել է նաեւ Առաքել Դաւրիժեցու Պատմութեան բնագրի հրատարակիչ Լ. Ա. Խանլարեանը, թէ «Սա Դադի վանքը չէ, որ գտնւում է Թարթառ գետի ձախ կողմում, Խաթրավանքից բաւական վերեւ եւ կոչւում է նաեւ Խութա կամ Գոթալ (՞) վանք,... ստոյգը՝ Թադէի վանք, որ գտնւում է պատմական Աղահեճ գաւառում (Փոքր Սիւնիք)», հիմնաւորուած եւ հաւանական չէ: (Տես նոյն տեղում, էջ 253, ծնթ. 24): Ուստի ճիշտ չէ նաեւ Ա. Դաւրիժեցու Պատմութեան բնագրում Դադիու ձեւի փոփոխումը Թադէու ձեւով, երբ «բոլոր բնագրերում պահպանուել է Դադիու ձեւը» (**Առաքել Դաւրիժեցի**, *Գիրք պատմութեանց, Երեւան, 1990, էջ 534, ծնթ. 446*):

15 Արցախի Խանձք տեղանունը զարմանալիօրէն զուգադիպում է Տայքում գտնուող եւ վրացերէնում յայտնի Ճանձ տեղանուան հետ, որտեղ երկու դէպքում էլ հիմքն է Խանձ-Ճանձ-ը, իսկ ք - տ եւ ճ հոգնակիներտ ածանցը:

16 «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԷ դար», հատոր Գ, Երեւան, 1984, էջ 601-602: Էջի ներքեւում նշւում է նաեւ ՌՄԳ (1654):

17 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԷ դար, Հատոր Գ, Երեւան, 1984, էջ 261-262: Հմմտ. ՄՄ, ձեռ. 8135, թ. 321բ, որտեղից տպագրութեան մէջ բաց է մնացել մէկ տող, որ լրացուած է այստեղ (կրկնուող՝ ագաճորոյն ի Գորիսի« փոխարէն՝» Եւ եմ բնակեալ յօտար երկրի»):

18 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԷ դար, հատոր Գ, էջ 489:

19 Մաշտոցի Մատենադարան, ձեռ. 2067, էջ 470-471: Ցիշատակարանի հրատարակութիւնը տե՛ս **Լէօ**, *Հայոց պատմութիւն, հ. 3, մասն 2, էջ 28-19*:

20 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», պրակ Ա, կազմեց Ե. Լալայեան, Թիֆլիս, 1915, էջ 998-1000:

21 **Սիմէոն Երեւանցի**, *Ճամբռ*, Վաղարշապատ, 1873, էջ 283-284: Հմմտ. ռուս. թարգմանութիւնը (Մոսկուա, 1956) էջ 360-361:

22 **Մակար Բարխուտարեանց**, *Արցախ*, Բագու, 1895, էջ 203:

23 **Լէօ**, *Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838-1913)*, Թիֆլիզ, 1914, էջ 174:

24 Ծուշու առաջնորդարանում եղած ձեռագրերի ամենամեծ եւ ընտիր մասը, որը փոյթ խնամքով ժողոված էր Բաղդասար մետրապոլիտն, վաճառած է Ծուշու առաջնորդներից ոմն եպիսկոպոս մի Թիֆլիզեցու վերայ մի քանի հազար րուբլու: **Մակար եպս. Բարխուդարեանց.** *Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ: Երեւան, «Գանձասար», 1999 էջ 269*:

25 «Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ», հ. 2, Էջմիածին, 1842:

26 **Սարգիս արքեպ. Ջալալեանց**, *Ժամանակարիորդութիւն ի Մեծն Հայաստան*,Ա, էջ 199-204, Բ, Տփխիս, 1858, էջ 222-227, :

27 **Մակար եպս. Բարխուտարեանց**, *Արցախ*, Բագու, 1895,

28 **Г.В. Абих**, *Геологические наблюдения в нагорной стране между Курой и Араксом,- Записки Кавказского отдела императорского русского географического обшества*, кн. 8, 1873, s. 63.

29 Հ. Օրբելու վիմագրագիտական աշխատանքի եւ նրա Армянские надписи Хачена աշխատութեան մասին տե՛ս **Բ. Ուլուբաբեան**, *Խաչենի իշխանութիւնը 10-16-րդ դարերում*, Երեւան,1975, էջ 21

30 **Մեսրոպ եպս. Տէր-Մովսիսեան**, *Հայկական արձանագրութիւններ*,- տե՛ս «Ազգագրական հանդէս», գիրք 25-րդ, 1913, 2, Թիֆլիս 1914, էջ 80-84: Մեսրոպ Մագիստրոսի ներկայացմամբ՝ «Դադի վանքի բազմաթիւ շինութիւնները կրում են տարբեր դարերի եւ արուեստի կնիք եւ ակներեւ ապացուցում են, որ այդտեղը սրբավայր է եղել եւ կարեւորութիւն է ունեցել շատ աւելի կանոխ, քան թուականով ամենահին յիշատակարանը, որ կարդում ենք եկեղեցիների պատերի եւ խաչարձանների վրայ» (նոյն տեղում, էջ 80-81): **Մեսրոպ Մագիստրոս Տէր-Մովսիսեան**, *Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները*, Երուսաղէմ, 1938, Դադի վանքի մասին՝ էջ 83-106:

31 Մեսրոպ Տէր-Մովսիսեանի գնահատականը այդ առումով խիստ ուշագրաւ է. Դադիվանքի զանգակատան «առաջին յարկի մէջ, արեւելեան պատի վրայ յենուած, կանգնեցրուած են այն մի զոյգ խաչքարերը, որոնք հայկական փորագրական արուեստի գլուխ գործոցն են: Բազմաթիւ են իմ տեսած խաչարձանները, շատերը նուրբ եւ ճարտարահիւս փորուածքով, սակայն այդքան կատարեալ գործ ես ոչ մի տեղ չեմ տեսել է ոչ նկարներում հանդիպել» (Ազգագրական հանդէս, 1913, 2, էջ 82):

32 **Ղեւոնդ Ալիշան**, *Արցախ*, - Բազմավէպ, 1988, 1-4, էջ 266:

33 Նորագոյն յայտնաբերումները տե՛ս Սամուել Կարապետեան, Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում, Երեւան, «Գիտութիւն», 1999, էջ 81-124:

34 Դիւան հայ վիմագրութեան, հ. 5, էջ 198, 215: **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 115, 117, 120:

35 Դիւան հայ վիմագրութեան, էջ 198, 215: **Սարգիս Քամալեան**, «*Աղուանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի կալուածների վերաբերեալ մի ղաբալա-կալուածագիր*, - «Կովկաս եւ Բիւզանդիա», պրակ 2, Երեւան: **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 115, 117, 120:

36 Դիւան հայ վիմագրութեան, հ. 5, էջ 200-204, 210: **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 111, 112, 116:

37 Դիւան հայ վիմագրութեան, հ. 5, էջ 204-206, 213, 214: **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 110, 114:

38 **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 116, թիւ 60:

39 Ըստ Բ. Ուլուբաբեանի, Սարգիսը մահացել է 1333 թ. եւ թաղուած է Դադի վանքում: Տե՛ս նրա Խաչենի իշխանութիւնը, էջ 322, «Արցախ», էջ 206: Դիւան հայ վիմագրութեան, հ. 5, էջ 205-207:

40 ԺԵ դարի յիշատակարաններ, Ա, էջ 24:

41 Դիւան հայ վիմագրութեան, հ.5, էջ 216:

42 Մանր ժամանակագրութիւններ, Բ, էջ 244:

43 ԺԷ դարի յիշատակարաններ, Գ, էջ 261-262, 489, 601-602::

44 «Արարատ», 1888, էջ 484 (488): **Ղ. Ալիշան**, *Սիսական*, Վենետիկ, 1893, էջ 35:

45 Армяно-русские отношения в первой трети XVIII века, Сб. док., т. II, часть I, под ред. А. Иоаннисяна, Ереван, 1964, с. 383.

46 **Համազասպ Ոսկեան**, *Արցախի վանքերը*, Վիեննա, 1953, էջ 109:

© National Library of Armenia